

կազմակերպող Յանձնախումբը կ'ուղղէ իր ջերմաշերմ չորհակալութիւնն Ազգոյի ազնի ժողովրդան, Հասարակութեան և տեղական Մարմիններու և Հաստատութեանց Ներկայացուցիչներու, քաղաքային Ընկերութեանց, ազնի բարեկանութեան որոնք հանձնան գործակիլ գործով և խօսքով ընելու Հանդէսը ճշմարիտ ցոյց մը Խոտալ-Հայ Եղբայրութեան։

Թող այս զուարժ օրն դրոշմուած Թոյայ ամէն սրտերու մէջ, անդր արձագանքը պիտի հասի անշուշտ ազատուած և ազատուելիք հնաւաւոր Հայ Երկիրներու մէջ, և պիտի տանի հոն անրս պառելի համերաշխութեան սփոփանքն ժողովրդեան մը՝ որ ինչպէս եղաւ միշտ բարեկամ ձախորդութեանց մէջ, նոյնպէս ուզեց կանգնիլ մօտ ուրախութեան վայրկեաններուն։

Այսօր և միշտ Խոտիա և Հայաստան ձեռք ձեռքի տուած պիտի աշխատին ընկերական բարեկցութեան և իրենց ֆառաւոր ապագային համար, այսօր և միշտ սերբ միաբանութեամբ ոգիներու յառաջ պիտի խազան, իրաւանց և Ազգաց ազատութեան ճամբուն մէջ, որուն համար այնափ կրցին։

Կազմնով մէկ ընտանիք պիտի բարգաւաճին և ծաղկին, պիտի ըլլան իրաւանէ զրաւական հաւասարակշռութեան և ընկերական արդարութեան աշխարհի մէջ, պիտի ցուցնեն շոշշուուն իրենց դարաւոր քաղաքականութեան յատկութիւններու։

Կեցցե՞ն Փոյր Ազգերը։

ՅԱՌՈՒՆ ՆԱԽԱԴԱՌՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՑՉ-ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Ազոյոյ 30 Օգոստ. 1920.

Հայութիւնը կրնայ ապահով ըլլալ՝ թէ Խոտիա այն երկիրն է, ուր Միմիթար Սերաստացւոյն զաւակներուն ձեռցով ըստեղծուած է սիրոյ և համակրութեան այն լայն հոսանքը հեռաւոր երկու ազգերուն մէջ, և զոր երրէք չի կրնար պաղեցնել Կապիտուլոնի վրայ թառած ո՛ւ և է կառավարութիւն։

Հ. Ա. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՀՀՀՀ

## Հ Ա. Յ Ա. Ա Ն

Ա. Ն Կ Ա. Խ Ո Ւ Թ Ե Ս. Ն Հ Ա. Ն Դ Է Ս Լ

Ի Թ Ո Ւ Ր Ի

ՀՀՀ

Կը ծագէր ԶԵ Ակադեմիերի արշաւոյսը, գեղանի և բարեյոյս՝ ինչպէս նորածին Հայաստանը արեան ծովուն մէջէն։

Անհուն ցնծութեամբ կը տրոփէին մեր սրտերը, երբ արփւոյն առաջին շողերուն հետ կը դիտէինց Այլարատեան իշազունանը որ խայտանքով մը ծածանելով ամարանցիս երկնամրարձ աշտարակէն՝ Կ'աւետէր ամենուն՝ Ազատութեան և Յաղթանակի հանդէսօւ։

Մարտազոռ Սարինան ալ իր ծիթենացարդ բլուրներով կարծես նոր փայլ և գեղեցկութիւն մը զգեցեր էր այն օր. ան՝ խազաղութեան խորհրդանշով մեզ կը մօտենար ժմտերես, բաղդն ունենալով ականաւես ըլլալու պանդուխտ Հայերու հոգեթունդ հանդիսին։

Նախապէս լուրը տարածուած էր ամէն կողմ հայկական տօնախմբութեան մասին. որով րլոց կողքերէն, ճամբաներու երակայնքին խոներամ արց և կանայց և մանկունք իրենց տօնական գունագեղ զգեստներով պմնուած կը զիմէին զէպ ի թորրի, զէպ ի մայր եկեղեցին՝ որ ուրախութեան աւետիսով, զանգակաց հանդիսական դուռանջիւնով՝ զանոնց սրբազն պաշտաման կը հրաւիրէր։

Մայր Եկեղեցւոյ մէջ.

Ժամը 10<sup>½</sup>, ին կրկին հնչեցին զանակները նոյն ժամուն կը սկսէր ձայնաւոր պատարազը ի նշան զոհութեան առ թարձրեալն, ընորհակալութիւն մը ազատութեան ցանկալի պարզէին համար։

Եկեղեցին խոնած էր հոծ բազմութեամբ

մը, Դպրաց անմիջապէս ետեր ներկայ էին Քահանայապետական վատիկաննեան կղերանոցի աշակերոց իրենց մեծաւորներով, ինչպէս նաև ներկայ էին Լոռինեանց Դպրոցին ալ երկու վարդապետներ իրեն ներկայացուցիչ, որոնց սարկաւագութիւն ալ կ'ընէին:

Պատարազը յառաջ կ'ընթանար իրեն արևելին նկարագրով. « վեհ՝ զգեստուց պերճութեամբ, բանաստեղծական՝ ծէսի խորհրդականութեամբ, երգերու քաղցրութեամբ և խաղուն ելքէջներով »: Փողովուրդը զարմացմամբ և հաճոյցով՝ լուս, ամփոփ և ուշադիր կը դիտէր ազդեցիկ և հմայիչ ծէսը»:

Այն ինչ լմցաւ պատարազը՝ և ահա զմբեթարդ տաճարը թնդաց Հայկական եռաձայն « Զգեզ Աստուած »ի խմբերգին... Գոհութեան երգն էր որ աւելի ազդու և վեհաշուր կերպարանց մ'առած էր, որուն կը մասնակցէին նոյն իսկ լատին բարեկամ կղերիկոսներէն հրեշտակային խումբ մը և երկու հատ ալ թաւ ձայներ:

Մեր հայ սրտերուն պէս իրենք ալ կարծես յուզուած և խանդավառուած էին ի մեծ զարմացումն ըոլոր ժողովրդեան. կը զգացուէր որ տառապեալ հայուն 500 ամեայ գերութեան, ողբին ու կոծին վերջ կը տրուէր, ազատութիւնն և խաղաղութիւնն էր որ կը տօնուէր. յաղթանակը, փրկութիւնը մարտիրոս ազգի մը՝ արիւնուուշտ ժողովրդեան մը ձեռքէն:

Ժամը 12ին ամէն որ գոհութեամբ կը մեկնէր եկեղեցին, ծրարելով իր սրտին ու մտցին մէջ անոյշ յիշատակ մը:

Գրական - Երաժշտական համդէս.

Ճաշէն վերջ, ժամը 4<sup>1/2</sup>, ին ամարանոցին հովանաւոր կողմէ՝ յարեւել՝ շքեղ հանդիսավայր մը դարձած էր. ամէն ինչ կարգաւորուած լոկ հայ մտաց հաշակով, հայ ձեռքերու գործունէութեամբ:

Մրտենւոյ և զափնիի ոստերով զար-

դարուած էր յաղթական կամար մը. վրայէն ծգուած էր սպիտակափայլ ժանեկազարդ վարագոյր մը, մէջտեղը բուրուներկ իմաշով, որուն պլուտած էր հայրենի զրոց՝ կարծես նեղիկ ծածանելով հայրենինց անոյշ հովերէ... մեր սրտերու խանդակաթ փշումներէն առ ազգս, առ հայրենիս:

Գեղեցիկ էր պատկերը և խորհրդառոր: Հայաստան կը փրկուէր լոկ խաչին թեերով, ի խաչն յուսալով, ի նա ապաստանելով... Մարտիրոսաց սուրբ արիւնն էր՝ խաչին համար թափուած՝ որ ազատութիւն կը ծանէր երկներէն: Եւ արդէն ինչ գեղեցիկ զուգադիպութիւն, ազգային ծէսն ալ նոյն օր կը խառնէր խաչի հրաշափառ յիշատակը մեր հանդիսին հետ, Վարագայ Ս. Խաչը, տօն մը զուտ հայկական իր ծագմամբ:

Հրափրեալները ուրախութեամբ և յուզմամբ այն գրօշին ներցէ ողջունեցին խաչով փրկեալ Հայաստանը:

Հանդէսը բացինց՝ որոտալով մեր սրտին և հոգւոյ խորէն մողիչ « Բամ՝ ֆորոսան »ը. որ զմեզ իսկոյն Շաւարշանի և Այրարատեան զաշտերը փոխադրեց՝ Վարդանանց, Վահանանց և արդի քաջաց Նահատակաց հետ կոռուելու և մեռնելու հայրենի սրտութեանց համար: Կղերիկոսները չափազանց խանդավառուեր էին ազգային բայլերգէն. պատանեկան աշխուժիւ և թարմ մորով եղանակը սորվեցան... և նոյն իսկ նոյն ժամուն անձկանօք հայերէն բառերն առնելով՝ երգել իսկ փորձեցին:

Բեմ ելաւ եղ. Սուբիսա, հայկական ազատութիւնն և անկախութիւնը ճառելու, իտալերէն լեզուով՝ հանդիսականաց հասկընալի ըլլալու համար: Նա համառոտիւ զծեց՝ Հայուն անցեալ կեանը, կրօնական և քաղաքական գերը պատմութեան մէջ. անցելոյն սպալից օրերուն յիշատակները ի սկզբան մելամաղձ շեշտ մը տուին բանախոսութեան, սակայն ան միշտ խորաթափանց և կորովի էր, և զեղուն արեւելեան բանաստեղծական թոփչներով: Բուռն և հոգեթունդ խանդավառութիւն մ'էր որ

սրտէն ու շրթներէն ցայտեց՝ երբ ազատութեան արջալոյսի ծագումը նկարեց։

Ան պատկերեց Հայաստանը ֆառապանձ՝ իրք թագուհի մը ծիրանազգեաց, որ կը յառնէ յաղթական արեան ծովու մէջէն, ուր կը խղդուի Վասրորի մահիկը։ — Մինչ ատենախօսութիւնը կ'աւարտէր հանգիսականաց խանդավառ և բուռն ծափերուն մէջ, երգեցինք « Մեր Հայրենիք » նուածայն։

Ըստից վերջ Եղ. Ստեփան՝ իտալական ներդաշնակութեամբ և հնչմամբ տաղ մը կարդաց ի պատիւ հայկական ազատութեան, գոհութեան և օրինութեան իդձեր ուղղելով առ Աստուած. և առ ամէն բարերար՝ որ ճեռք կարկառեց՝ սուզի օրերուն մէջ՝ անոր յաղթանակին համար։

Յաջորդեց սրտազեղ ողջոյնի երգը (Ողջոյն տուէք իմ Հայրենեաց) առ Հայաստան, առ հայրենի աւերակս, առ Հանրապետութիւն։

Ազա եղ. կարապետ արտասանեց Մեծն Ալիշանի «ի Բամբիռն Հայկազնի »ն մայն տալով հայ ոգւոյն, հայ հանճարին, հայ հերոսաց, ողջունելով « եռափայլ, եռախորհուրդ » աստուածատուր դրօշը... արտասանութիւն հայրէն, որ սակայն ախորժելի եղաւ հանդիսականաց՝ շեշտին և բառերու կորովութեան և զեղեցկութեան համար։

Եւ մինչ այսպէս կ'երգէինց ու կը դրուածէինց Հայաստանը, յիշեցինց մեր պանդուխտ վիճակը՝ ցանկալի հայրենիքէն։ Կ'ուզէինց թռչչի, սակայն լայն և երկայն անջրպեսներ կը բաժնէին զմեզ...։ Մելամազդ շեշտով մեներգեց վ. Հ. Ղեւոնդ այն ատեն «իմ հայրենիք զի՞ կը կանչէ», որուն մէն մի տունէն վերջ խմբերզը կը կրկնէր զեղայարմար եղանական որպակազմ վեցոտղեան տուն մը, իրը բալասան կարտակէզ սրտին, աւետելով և ողջունելով վերահաս հայկական արփին, ազատութիւնը, և հրաւիրելով զուարթունն ազատութեան ցանել ծաղիկ յերկնից՝ մինչ « Հայոց քաջաց խայտան հոգից »։

Հուակ Եղ. Եղիս լսեցուց իտալական

լեզուով Հայրենեաց Ալեոր Նահապետին « Հայոց աշխարհիկը », անոր մարգարէական ոգին, իր տեսած Հայոց գարունը այսոր կ'աւետէր մեր սրտերուն։ Կը դիտէինց հոն զեղանի տեսարաններն Հայաստանի... Հայոց ֆառքը, մեր Հայրենը ու բաջիրը, որ խաչով ու սրով պաշտպանեցին Հայրենիքը։ « Յամբած ծերունին » կ'աւարտէր իր տողերը մեկնելով ի շիրիմ, տալու « հին Հարց աւետիս » թէ հասեր է Գարունն Հայոց։

Հայրենի յիշառակաց, Հայաստանի արշալոյսին բով չէինց կրնար մոռնալ մեր երանաշնորհ Հայրը.. խանդավառ սրտով և ոգով առ Մեծ Սերաստացին ուղղեցինց մեր հուազաց յանգերզը... ցուցնելով Հայաստանի զՄիթիթար, արշալոյսը կրօնից և գիտութեան։ Յաջող երգովս վերջ տուաւ ուսումնական հանդէսը բուռն ծափերու մէջ։

Պատուասիրութիւն։

Գրական հանդիսին՝ որուն այնքան խանդավառ ծափեր և զրուատից ընծայեցին հանդիսականը՝ յաջորդեց ուրիշ տեսարան մը աւելի զուարթ և ընտանի։ Համեստ պատուասիրութիւն մէր զոր կ'ընծայէինց հանդիսականաց։

Այն ատեն սկսան սրտազեղ մաղթանը ներ բխի փոքրիկ կղերիկոսներու սրտերէն, երգոց քաղցրածայնութիւններ, խըմբերգ, մեներգ. հին և նոր ի միասին խառնած, ամէն տեսակչն, թատերական, զաւեշտական, յանկարծարանութիւններ, բանաստեղծական խուսափուկ տողեր, վերջապէս, կեցցէներ. բաժականաւոր՝ մեր կենաց, Հայաստանի ազատութեան, վերականգնան և բարօրութեան համար։

Ալմէնը դիմեւած « Բամբ-փորտան »ի հոգեթունդ աշխուժէն, զայն անձկանօք կրկնել տուին, ու ծափերով պսակեցին հայկական քայլերզը։

Քաղցր ժամերը, ինչպէս փորձն ամենուն կը ցուցնէ, երազընթաց կը սուրային, ա-

ընուն փոխանակեց լուսինն ու սիրուն աստղիկները. մոմեղնները ալ վրան աւելցան դաշտութեանց ծոցին մէջ...:

Վերահաս զիշերը զրեթէ բռնի, և աւկամայ զմեզ կը բաժնէր... հիւր և հիւր ընկալ, փակելով ընկերական սիրատենչիկ զրօսանքն ու խնդակցութիւնը անմոռանալի օրուան Հիւրերը, զո՞ն բոլոր արտով, կըրկնեցին մաղթանաց, խնդակցութեան սրտապեղ իդաքեր և չերմ չնորհակալութիւններ. և վերջին անգամ մ'ալ բուռն տենչով հնչել տուին մեզ և իրենք ալ հնչեցին մեզ հետ միասին ազդեցիկ և Բամ-փորուան »ը, և վերջապէս բաժնուեցանք, ուստախութեամբ և սիրով յուզուած:

Բայց հանդէսը զեռ չէր աւարտած. կը մնար յետին փայլը, յետին նշոյլը, որ միշտ զեղեցիկ է, ինչպէս վերջալոյսը պայծառագեղ օրուան մը:

### Լուսավայրութիւն.

Թէպէտ լուսինն հմայիչ և անհունին մէջ ցիրուցան գեղանի աստղերը իրենց փայլով մեզ կը ժպտէին, սակայն հաւասարապէս զեղեցիկ և մոզիչ էր տեսարանը:

Հայկական ամարանոցը Սարինայի բըլրակներու խումբերուն մէջ կը պլազմար իրրե սիրուն զոհար մը, յորում արփոշն շողերը թափանցելով կը բեկրեկին և դուրս կ'ելլեն հմայիչ զոյներով...:

Բոլոր շէնքին քիւն ու աշտարակները կը խայտային գունագեղ լապտերներով. հայկական եռագունեան լուսավառ բոցեր (bengala) օղը կը զեղերփնէին ակնախտիդ

պայծառութեամբ. վենետիկեան երեսոյթ մ'էր կարծիս..., և նմանութիւնը զեր աւելի մերձաւոր՝ երբ այն գոյներու և պայծառութեանց ներդաշնակութեան առջև չկարենալով խուլ և համր մնալ մեր սիրուն ու շրթունքը, սկսանց երզել ընութեան և մեր հայ ձուաց և արուեստին հնո՞ւ հայր բենի երգեր, քայլերգ, ողջուներգ, առ հայրենիս, անցեալ փառաց յիշատակներու նորոգում:

Բայց զեղեցիկն այն էր որ մեր երգերուն իրը արձագանգ հեռուէն ճամբաներու վրայէն ծափահարութիւններ կը կրկնուէին. մեր ծանօթներն էն, որ կը շրջէին նոյն ժամուն ճամբաներուն վրայ՝ վայեկլու հայ-վենետիեան երեկոյթը, դիւթիչ և չընադատասրանը. և անոնց հետ բոլոր շրջակայրը:

Կեցցէներով ու ծափերով չգոհացան. իրենց ուրախութեամբ անզուապ սրտերը ողելից շեշտով մը սկսան հնչել, օտար շրթունքներ՝ հայ երգեր, հայ օրհներգ, արձագանգ մեր ըղձից, մեր օրհնութեանց. հնչեցին «Բամ-փորուան» առանց բառերուն, «Միծեռունակը» և «Զեհեղ Աստուած»ը հայ բառերով, արժանապէս խլելով փոխադարձ մեզմէ, կեցցէներ՝ և ծափեր՝ մեր զեղապայծառ շնչի երդիցին:

Կը սահէր ժամը, կը նուաղէին կանթեները, ցաղցր ցունն ալ կը մերձենար առաջաստելու մեր աշշերը, մեր միտքն ու սիրու, և այնպէս կը փակէր օրուան յիշատակը և հոգեզմայլ ուրախութիւնը ցաղցր կնիքով ապագային համար:

\* \*

Quem tulit ex Ararat ramum  
Victriis olivæ  
Nunc avet Armeniæ  
Ferre Sabinus ager.

Զոր ի Մասեաց առեալ շիւլ  
Ցաղթականիթ ծիթենոյ  
Ըզմոյմ այժմիկ չայկայ տան  
Մաղթէ երկիր Սարիթայ

Ման. — Գրական հանդիս աստղակ աստղափն նուապս յարինեց չ. Մոմեցի ծիստական (Ճնշեամբ Սարինացի) որ իր ներկայութեամբ մեր հանդէսը կը պատուէր.

**VIA CRUCIS, VIA LUCIS****ԽԱԶԻ ԽԱՄԲԱՏ, ԼՈՅԻ ԽԱՄԲԱՏ**

Ed ora sorge più bella, più santa  
Dalle sue stragi l'Armenia cristiana,  
Che martire dell'ira musulmana  
Vittoriosa oggi un pëana canta.

Oggi, si, canta superate l'ire  
Di quell'infame giogo opprimente,  
Quel popolo non nato per servire  
Più libero che mai oggi si sente.

Sotto quel giogo raddoppiò il dolore!  
Da ogni armeno petto in armonia  
Selvia per l'aure in gemito d'amore  
Un sol grido: Soccorrici, o Maria!

Ed Ella ai fidi, Madre ognor pietosa  
Sorrise dal celeste gonfalone  
Sfidando del nemico l'ira sdegnosa  
E scese in campo nell'aspra tenzone.

E su il dolore, or risplende la pace!  
E un canto di trionfo in dolce suono  
Sale per l'aere! Risplende qual face  
La Vergine Maria su l'alto trono.

Caddeo, è vero, ed il tuo suol ver miglio  
Resero del lor sangue i figli tuoi!  
Ma un martire fu sempre ogni tuo figlio  
Che accrebbe in Ciel la schiera degli eroi!

Tramonta il sole in occidente, e langue!  
Prega la santa schiera su le sorti  
E libertà, al prezzo del lor sangue  
Per te domanda, a prezzo delle morti!

Gioisci! È sollevato dal martire  
Mira con gioia l'opra sua divina.  
Forte sei, e arbitro del tuo avvenire,  
O Popol d'eroi! Sorgi e cammina.

**Ennio Francia**

Եան. — Առանձակագիր կարդաց ստորագրեալ կղերքիսութ՝ «Պատուասիրութեան» ժամանակ:

Արդ կը յառնէ աւելի սուրբ և լքեղ  
իր շարպերէն՝ քրիստոսականն Հայաստան.  
Ան՝ մարտիրոս խոլամական բըլուութեան,  
Յաղթանակի այսօր քայլերգն իւր կ'երգէ:

Այս կ'երգէ անի այսօր յալթելով  
Թուրք ամբարիշ ճընշող լուծին բըլուութեան.  
Ան ժողովուրդն որ չէ ծընած ստրկութեան,  
Ազատ կը զայ, քան բնաւ երգեք, զինքն այսօր.

Այն լուծին տակ կրկնապատկեց իր ցաւերն.  
Ամէն Հայու կործէրէն բըխած՝ քաղցրածայն  
Կը բարձրանար երկնք սիրոյ հնծումով  
Զայն մը միայն. Օգնէ մեզ, ով Մարիամ:

Եւ նա յաւէտ զըթած մայրիկ իր որդուց  
Ժըպտաց անոյշ հայ խաչարօս երկնքին  
Խորտակելով նախատալից թուրքի թէնն,  
Անեղ մարտիր բոսորագեղ դաշտն իշաւ:

Ցաւին վըրայ, խաղաղութիւնն արդ կ'իջէ,  
Յաղթանակի երգ մը անոյշ, քաղցրածայն  
Երկնք կ'ելէ: Կը շողշողայ երբն շահ  
Կուսական մայրն իր ոսկերէն զահուն վրայ:

Ինկան, այն, և քու երկիրդ, որդիներդ  
Իրենց արեամբ բոսորագեղ ներկեցին,  
Բայց մարտիրոս մ'եղաւ ամէն քու զաւակդ  
Ուր գիւցանց դասն անեցուց երկնից մէջ:

Արփին իւր մայրը կը մըտնէ, կը մարի.  
Խոսմը սրբոց բաղդիդ համար կ'աղօթէ,  
Եւ քեզ համար ազատութիւն կը հայցէ  
Իրեն արեան և մնուից զիներով:

Օ՞ն ցընծա դու, և խոշտանքէդ ազատած  
Աստուածային գործն հըրճուանկով նըրկատէ.  
Հոգօ՛ր ես դուն, և ապագայիդ վընառու,  
Դիւցագներու ժողովուրդ, նէ և քալէ: